ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.— Ֆրանսական դեսպան Մ. Բոնտան և անգլ. գործակատար Մր. ՀասլդՎԼտ երէկ Բ. Դուռն երթալով, յանձնարար տեսակցեցան Բարձր. Մեծ—Եպարքոսին և Արտաքին գործոց Նախարարին հետ։

—Բարիզի օսմ. դեսպան Սալիհ Միւնիր պէյ, որ սիգնալատրված Գալիս կ'գնայ Նսի, երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ—Եպարքոսին և Արտաքին գործոց Նախարարին հետ։

ԹՈՒՐՔԻՆԵԼԼԷՆ առեւտրական դաշնագրի խառն յանձնաժողովն երէկ ևս գումարուեցաւ Խարիսիէի պաշտօնական մէջ։

—Արտաքին գործոց Նախարարութիւնը Մաքսային Վարչութենէն ձեռնտաս պաշտօնեայ մը ուղած է Թուրքիէլլէն առեւտրական դաշնագրին մէջ ներմուծելի քանի մը յոդուածներու վրայ բացատրութիւն տալու համար, ի մէջ այլոց Մանիֆէսթոյի ձեւակերպութեանց մասին։

ԵՄԷՆԻ ՆԱՀԱՆԴԻՆ ծովեզերքներուն վրայ հսկելու համար, արդէն գանուած պահականաւերուն վրայ 4 յաւելեալ ուղեցան։ Նիմէզ, Գօզլու և Ասիր պահականաւերն արդէն սկսած են հսկողութիւն կատարել։

ՄԱՀ ԻՇԽԱՆ ՄԱՎՐՕՓՕՐՏԱԴՈՒԹԻ.—Կոնքրէթոց առաջնորդ, հելլենական դեսպանատան մասրան մէջ հոգեհանգստեան կատարուեցաւ ի յիշատակ իշխան Մավրոքորտատոյի։ Ներկայ էին գործակատար Մ. Բոյէն, դեսպանատան ու հիւպատոսարանի պաշտօնատարներէն չորս պատուոյ, Ցուհաց Գամարիրքարանի Սինոդին Ա. քարտուղար արհիմանդրիտ Կենեատիոս, Եդեսացի Պատրիարքական փոխանորդ արհիմանդրիտ Երմանոս, Սի նա Լերան և Այնորզի վանքերուն պատուիրակները, Մ. Լ. Զարիֆի և որդիք, Գարաթէոսորի էֆ. և դստերք, Անտրան կղզիին երեւելիք, Զարիսն ազգական վարժարանի Տնօրէնուհին, գրական և երաժշտական Սիլլոգոսներուն Նախագահներն և հելլէն գաղթականութեան երեւելիք։

—Իշխան Մավրոքորտատոյ վերջերս իր կրտսեր աղկան (Մ. Գալիմանի հետ ամուսնացեալի) զաւակին որդեգրած և Նիքոլաս Մավրոքորտատոյ անունը տուած էր անոր։

—Հանգուցեալ իշխանին յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ պետական ծախքով։

—Վերջին թղթատարով առնուած Ա թէնքի լրագրոյ մեծամասնութեամբ ի վեր կ'հանեն իշխան Մավրոքորտատոյի դիւանագիտական արժանիքն ու գործունէութիւնը։ Իշխանը մեծապէս նպաստած է Հելլէն գրականութեան ծաւալման Թուրքիոյ Յոյն հատակագրեանց մէջ, իբրեւ նախագահ գրական Սիլլոգոսին։ Եւրոպական Թուրքիոյ բոլոր նահանգներու գիւղերուն վիճակագրութիւններն ունէր իր քով, եւ հետեւապէս Թուրքիոյ գործերը լաւագոյն ճանչցող դիւանագէտներէն մին էր։ Այս պայմաններուն մէջ, իր մահս այս պահուս ազգային կորուստ մ'է, կ'ըսեն Աթէնքի լրագիրք։ Իշխան Մավրոքորտատոյ պահած ունէր իր հոր ժառանգ դիւանաթուղթերը, որք Ցունաստանի պատմութիւնը կ'պարունակեն 1820էն մին չեւ իր մահը։

—Իշխան Մավրոքորտատոյ, ինչպէս բոլոր, նուազման մը հետեւանք մեռած է։ Սասակի հարբուխ մը բռնուած էր, և որովհետեւ որսի հիւանդութիւն ալ ունէր, կոկորդին մէջ պալար մը գոյացաւ, որ վիրաբուժական գործողութիւն մը անհրաժեշտ դարձուց։ Ուրբաթ առաւօտ սակայն կաթուածը վրայ հասաւ և լմնցուց։ Մահուան առաջին լուրն առնելուն պէս, Եկեղեցի Պատրիարքական փոխանորդ արհիմանդրիտ Երմանոս, Սի նա Լերան և Այնորզի վանքերուն պատուիրակները, Մ. Լ. Զարիֆի և որդիք, Գարաթէոսորի էֆ. և դստերք, Անտրան կղզիին երեւելիք, Զարիսն ազգական վարժարանի Տնօրէնուհին, գրական և երաժշտական Սիլլոգոսներուն Նախագահներն և հելլէն գաղթականութեան երեւելիք։

—Իշխան Մավրոքորտատոյ վերջերս իր կրտսեր աղկան (Մ. Գալիմանի հետ ամուսնացեալի) զաւակին որդեգրած և Նիքոլաս Մավրոքորտատոյ անունը տուած էր անոր։

—Հանգուցեալ իշխանին յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ պետական ծախքով։

—Վերջին թղթատարով առնուած Ա թէնքի լրագիրք մեծամասնութեամբ ի վեր կ'հանեն իշխան Մավրոքորտատոյի դիւանագիտական արժանիքն ու գործունէութիւնը։ Իշխանը մեծապէս նպաստած է Հելլէն գրականութեան ծաւալման Թուրքիոյ Յոյն հատակագրեանց մէջ, իբրեւ նախագահ գրական Սիլլոգոսին։ Եւրոպական Թուրքիոյ բոլոր նահանգներու գիւղերուն վիճակագրութիւններն ունէր իր քով, եւ հետեւապէս Թուրքիոյ գործերը լաւագոյն ճանչցող դիւանագէտներէն մին էր։ Այս պայմաններուն մէջ, իր մահս այս պահուս ազգային կորուստ մ'է, կ'ըսեն Աթէնքի լրագիրք։ Իշխան Մավրոքորտատոյ պահած ունէր իր հոր ժառանգ դիւանաթուղթերը, որք Ցունաստանի պատմութիւնը կ'պարունակեն 1820էն մին չեւ իր մահը։

—Իշխան Մավրոքորտատոյ, ինչպէս բոլոր, նուազման մը հետեւանք մեռած է։ Սասակի հարբուխ մը բռնուած էր, և որովհետեւ որսի հիւանդութիւն ալ ունէր, կոկորդին մէջ պալար մը գոյացաւ, որ վիրաբուժական գործողութիւն մը անհրաժեշտ դարձուց։ Ուրբաթ առաւօտ սակայն կաթուածը վրայ հասաւ և լմնցուց։ Մահուան առաջին լուրն առնելուն պէս, Եկեղեցի Թագաւոր Թիւնապահի մը միջոցաւ իր ցաւակցութիւնն յայտնել տուաւ Մավրոքորտատոյ իշխանուհւոյն։ Մի՛ոյնպէս եղան ալ անձամբ այցելութիւն տալու իշխանուհւոյն և իր փեսաներուն՝ Մ. Մ. Գալիմանի և Սուլցոյի։ Օլկա Թագուհին եւս իր ցաւակցութիւնն յայտնել տուաւ պատուակալ տիկնոջ մը միջոցաւ։ Վարչապետ Մ. Տէլիանիս, քաղաքական կուսակցապետներն և ուրիշ բարձր անձնաւորութիւնք եւս ցաւակցական այցելութիւն տուին ընտանիքին։ Իշխան Մավրոքորտատոյ ունէր տարեկան 4,000 ֆր. է։ Կանայիկ Մէֆմիճէ, Օսմանիէ և Իսթիլալ, Ս. Փրկիչ պատանեաց Մեծ—Խոյնը։ Պատուոյ Լէգէոնի մեծ սպայութեան Խաչը։ Ս. Անան և Տանիլ պատանեաց ներքին Մեծ—Խաչերը։

—Պոլսոյ հելլէն Առեւտր. Սենեկին եւս, որուն պատուակալ նախագահն էր հանգուցեալ իշխանը, որոշեց 1. ցաւակցական հեռագիր մուղղել Մավրոքորտատոյ իշխանուհւոյն. 2. պսակ մը դնել դագաղին վրայ. 3. Կիրակի հոգեհանգստեան պարարագ մատուցանել տալ. 4. իր ամաթթերին մէջ հրատարակել իշխանին կենսագրութիւնը, հանդերձ կենդանագրով։

ՕՍՄ. ԲԱՆԱԿԸ.—Թուրքերէն թերթերը կ'ծանուցանեն թէ զանազան զորաբանակներու հրամատարներ Սպարապետ Թիւնէն հրաման ընդունած են տեղեկացնել թէ իրենց տրամադրութեան տակ փոխադրական ինչ միջոցներ ունին, և թէ ի հարկին գաւառակներէն օրչիկ գրաստ և սայլ պիտի կրնան ժամակարգել բանակին։

—Կայս. Իրատէի մը համաձայն, Ադ նաստուլի և Բուժելիի նահանգներէն 2,000 ձի պիտի գնուին հեծելազօրայ և Թնդանօթաձիգներու համար։ Գնուելիք ձիերուն չափերը Արքունի մասներու Տնօրէն Յերգ Յայիգ փաշան պիտի որոշէ, և ժամանգէտ ատաներէ կազմուած յանձնաժողով մը նահանգները պիտի երթայ, ձիերն ընտրելու և գնելու համար։ Ամկից գլաս, օսմ. բանակին պէտք ունեցած ձիերուն մէկ մասն ալ, 1800 հատ, օտար երկիրներէ պիտի գնուին, ո՛ւր որ ժամն գտնուին։

—Սպարապետութիւնը ձեռնարկած է երկու Հիւսար գունդերու կազմութեան, ինչպէս երկի ծանուցինք։ Տակաւին—փաշայի զօրանոցին մէկ մասն այս երկու հեծելագունդերուն համար ընկալութեան պիտի յատկանայ։

ՎԱՒՆՈՑԻ կառավարական պաշտօնատունն անցեալ Շբ. օր ժողովին այրեր է։ Վնասը 100,000 ֆր. է։

ՊՈՒԼԿԱՐ ԽՌՈՎԱՐԱՐՔ.— Պուլկար կառավարութիւնը շրջաբերական մը ղրկեց բոլոր քաղաքապետներուն, հրաւիրելով զանոնք որ լուծեն խռովայոյզ ընկերութիւնները, և անոնց բոլոր թղթակցութիւններն ու դիւանաթուղթերը գրաւուին։ Աներեսայ Շբ. Իրիկուն, Սոֆիայի ոստիկանութիւնը ձերբակալեց երեք հռչակաւոր խռովարարներ, Միխայլովսքի, Զանչէվ, և Նիքօլով, որք բանտարկուեցան Խռովայոյզ ընկերութեան կեդրոնատեղին կնքուեցաւ և բոլոր թուղթերը գրաւուեցան։

—Վարչապետ Մ. Տանէվ Սօպրանիէին մէջ յայտարարեց թէ այդ ընկերութեան գոյութեան չի կրնար աչք գոցել, քանի որ ան օրինական պատուէրներու հակառակ կ'գործէ։ Կառավարութիւնն որոշած է ոստիկանապետին վրայ զինուորական շրջան մը հաստատել, հրատխուսքերուն անքան արդիւնաւոր համար։ Թուրքերէն թերթերը Նայէ Ֆրայէ Բրէսէէ առնելով կ'ըսեն թէ Պուլկար իշխանապետութիւնն հրատխուսքերուն շարժման վայրերը զինուորներով պաշարած է։

ՀԱՆՐՕԳՈՒՈՅ ՇԵՆՈՒԹԻՒՆԻՆ Ի ԶԱԹԱԼՁԱ.—Զաթալճայէ կիր, որուն թատրոնով կ'նեւագրուի թէ հանրօգուտ շինութեանց վերաբերեալ յատակաձեւերն ու ծրագրերը Պոլիս ղրկուած են, և հրամանի կ'սպասուի, շինութիւններն անմիջապէս սեսելու համար։

ՕՍՄ. ԲԱՆԱԿԻՆ ԶԻՒՐԸ.— Կայսերական ձիասանոցներուն (Հրա) մէջ ձեռք առնուած միջոցներուն և ձիարշաններուն արուած քաջալերութեանց շնորհիւ, տեղական ձիերու արտադրութիւնը կրնայ բուել օսմ. բանակին պէտքերուն։ Ասոր համար Կայսերական Իրատէ մը կ'հրամայէ հեծելազօրաց և թնդանօթաձիգներուն պէտք ունեցած ձիերը գնել Անատոլուի և Բուժելիի նահանգներէն։ Այս նպատակաւ մէն մի նահանգի մէջ յանձնաժողով մը պիտի կազմուի։ Զինուորական պատասխանատու Ընդ. Վարչութիւնը պիտի հայթայթէ պէտք եղած գումարները։ Այս հրաման Սպարապետութեան կողմէ հաղորդուեցաւ բոլոր զօրաբանակներու հրամատարներուն։

—Կայսերական հրամանաւ Զիքիէլերի և Սուլթան—Սուլի կայսերական ոգաբարանոցներուն համար նոր յատակներ (այսչէր) պիտի գնուին։

ԿԱՏՂԱՏ յուն մը երեկ երկու թուրք խաւաս Ղալաթիոյ կողմը,

ԴԻՍԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՔ. — Կայսերական Իրատէի մը հրամանաւ, Դասական նախարարութիւնը չոգաբերականով մը աղդարարեց դասական քննիչներուն թէ դասական պաշտօնատարք, ա՛վ որ ալ ըլլան և ի՛նչ ասիճան ալ որ ունենան, անմիջապէս պաշտօնակ պիտի ըլլան և դասատանի պիտի ենթարկուին, եթէ իրենց պարականութեանց մէջ թերանան, և ուր է զեղծում գործեն։

ՀԱՊԵՇԱՍՏԱՆԻ Բ ՄԻՒԹԻ.—Կայսրէհին, եթէ պէտք է հաւատ ընծայել Աթէնքի լրագրոյ խօսքին, այս տարի Երուսաղէմ պիտի երթայ լուսա և երկրպագութիւն Ս. Տեղեաց։

ԱՓՐԻԿԵԱՆ ՏՐԻՊՈԼՍՈՅ ոստիկան զինուորներուն վրայ 274 հոգի ևս պիտի աւելնան։ Այս նպատակաւ, 572,949 ղ.ի վարձ մը բացուեցաւ։

ԲԱՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, ուրբաթ իրիկուն, արտասովոր նիստ մը գումարեց, ընկերութեան հիմնադրութեան 48րդ տարեդարձին առթիւ, 1903—4 ակադեմական տարուան համար նոր դիւանի ընտրութիւն կատարելու։ Մասնաւոր քարտուղար Տ.որ. Անառէ Անթիբ ընկերութեան տարեկան տեղեկագիրը կարդաց, ի վեր հանելով վերջացող տարուան մէջ ներկայացուած գիտական աշխատութիւններ։ Խօսեցաւ Կաղլի Մեղէլլի հրատարակութեան յաղագսի վրայ, որուն պատասխան է ընկերութեան ելմտական անձուկ վիճակը։ Նոր դիւանը պիտի զբաղի գրամական կացութիւնը բարւոքելու։ Տ.որ. Անթիբ խնդրեց որ ընկերութեան անդամք տարեկան հանգանակութիւն մը կատարեն իրենց մէջ, և ընկերութեան թղթակից անդամներն ալ մարց տուք մը վճարեն։ Յետոյ ընկերութեան գիտական աշխատութեանց դասնալով, ըսաւ թէ ընկերութեան գործը բեղմնաւոր եղած է ամէն տեսակ աշխատութիւններով։ 40էն աւելի գիտական զեկուցումներ եղած են, հիւանդանոցներու վեց վիճակագրութիւններ և բազմաթիւ անդամական բեկորներ և հիւանդներ ներկայացուած են։ Բալոր այս զեկուցումներուն վրայ չանեկան վիճաբանութիւններ եղած են։ Վերջացուց իր տեղեկագիրը, բարեմաղթութիւններ ընելով Օգոստոսի Կայսեր փառաց և երջանկութեան համար, Որուն հայրական հովանւոյն տակ Բժշկական Ընկերութիւնը կ'ապրի և կ'բարգաւաճի (Ծ.գ.)։ Ընկերութիւնն ապա 1903—4 տարուայ համար իր դիւանը կազմեց։ Ներկայ անդամոց թիւն էր 17, բացարձակ մեծամասնութիւն 9։ Տ.որ. Թարթա և Աբիոգէ քուէ համարի քննիչ ընտրուեցան։ 14 քուէով նախագահ ընտրուեցաւ ռուսական հիւանդանոցին բժշկապետ Տ.որ. Զէրոդիէվ, Ա. դեր—նախագահ՝ Տ.որ. Պալիոս (17 քուէ), Բ. դեր—նախագահ՝ դեր—Ծովակալ Տ.որ. Ֆիքրի փաշա (9 քուէ), ընդհ. քարտուղար՝ Տ.որ. Եղուպեան (10 քուէ), մասնաւոր քարտուղար՝ Տ.որ. Անտոնաքուրս (11 քուէ), քարտուղար խմբագիր՝ Տ.որ. Ռիցօ, գանձապետ՝ Տ.որ. Մրիոգ-Ֆորիսէ, գրապետ՝ Տ.որ. Բէսէճէն Աքէսդորիէն։ Տ.որ. Զէրոդիէվ նախագահական ատոռն անցնելով, ելոյթներ լրութիւն յայտնեց իրեն եղած պատուոյն համար, ինչպէսեւ ընկերութեան ընդհանուր կալուածութիւնները մասոյց նախորդ դիւանին անդամներուն։ Յետոյ բժշկիներ մեծարուելու նպատակով անդամներուն, ընկերութեան 48րդ տարեդարձը ասնելու համար։ Ընկերութիւնն այս տարի հաղկերոյթ չառաւ ինֆլուենցայի պատճառաւ, որ խրնդալի կարգադրիչ յանձնաժողովին անդամներէն մէկ քանին իրենց տուներուն մէջ գոված է։

—Ուրբաթ օրուան ժողովական նիստին մէջ նոր վիճաբանութեան նիւթ եղաւ փողոցները ծովու ջուրով ոռոգելու դրութիւնը։ Տ.որ. Թէոմէն Աքէսդորիէն կարիւոր դեկուցում մը կարդաց մասնաւորապէս ծովու ջուրով ոռոգելու դրութեան առաղջարար հանգամանքին վրայ, երկարօրէն նկարագրեց ժանտանդին դէմ մաքառելու համար անօրինելի միջոցները, և առաղջապահական օրինաց համաձայն ջրադիներու յատակաձեւ մը պարզեց։ Ինդրեց որ Վասֆ-ի հասանքէն, իբրեւ շարժիչ զօրութիւն, օգուտ քաղուի, ծովուն ջուրը ցամաք բերելու համար։ Տ.որ. Թէոմէն կ'կարծէ թէ ծովու ջուրով, որ միկրոբներու դէմ ոգորող տարրեր կ'պարունակէ եթէ կոյանոցները մաքրուին, կարելի պիտի ըլլայ ժանտանդի համաճարակներու առաջքն առնել։ Տ.որ. Յակոբեան յղութեան Երդ և 7րդ ամիսներու մէջ պատահած ժանտանդի երկու դէպքեր յիշեց, որոց ախտանիշները ճանչնալու դժուարութեանց վրայ ճառեց։ Այս առթիւ ժանտանդի միջոցին պաղ լոգանքներու չարաչար գործածութեան դէմ խօսեցաւ, և խորհուրդ տուաւ ժանտանդ գաղջ լոգանքներու կիրառութիւնը, պաղ լոգանքներու կիրառութիւնը ժամանակ պարագաներու վերապահելով։ Տ.որ. Եղուպեան և Ֆ. համակարծիք գտնուեցաւ Տ.որ. Յակոբեանի, և ըստ թէ պուլկարական հիւանդանոցին մէջ այս դրութեամբ 21 հիւանդներ դարմանուած են, որոց վրայ իր ըսած զննութիւնները պիտի հաղորդէ ընկերութեան։ Տ.որ. Թէոմէն Աքէսդորիէն պատնդեց որ Տ.որ. Յակոբոի իր դարմանած երկու հիւանդներուն ժանտանդին պատճառները պարզէ։ Տ.որ. Յակոբեի պատասխանեց թէ իր երկու հիւանդներն ու անոնց եղբայրը ոսարէ կերած էին։ Միշտ ոսարէն, ժանտանդին պատճառը։

ՄԱՌՍԱՆԵՆԳՈՒԹԻՒՆ.—Իզմիրէ կը գրեն թէ անցեալ Եշ. գիշեր, ժամ 10ին միջոցները, Իզմիրի քարափին վրայի պահականոցին սպայէ հրաձգի պատիւն մը լսելով, ձայնին եկած տեղը կ'փնտրեն, և կ'տեսնեն որ անծանօթ մարդ մը նաւակով քարափն եկած է, և կռնակը պարկ մ'ունենալով կ'փախչի։ Իսկոյն կ'սկսին հալածել զայն։ Մարդը տեսնելով որ պիտի բռնուի, պարկը կռնակէն վար կ'նետէ և փղոցներուն մէջ անհետացած կ'ըլլայ։ Պարկին մէջ կային 37 տուփ վառօդ։

ՑՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ.— Վիեննայի Թերթերուն մէջ կ'կարդանք թէ Աթէնքի Կառավարութեան կողմէ յայտարարուեր է որ եթէ Պուլկար անհնդարձ տարրեր չափն անցնեն, Ցունաստան պատրաստ է ակնկալել Օսմ. Տէրութեան՝ ի պահպանում կարգապահութեան։ Վարչապետ Մ. Տէլեանիս հակառակէ պուլկար խռովարարներուն։ Բայց յիշեալ Թերթերը կ'յարեն թէ Թուրքիա ա՛յնքան օրաւոր է չնորհիւ իր սպառազինութեանց և իր զորաց բազմութեան և կարգութեան, որ արտաքին գործակցութեանց պէտք պիտի չունենայ, եթէ երբեք հարկ ըլլայ պահպանել անգործութիւնը Բուժելիի գաւառաց մէջ։ Աթէնքի մամուլն հակառակ կ'գրէ պուլկար խռովարարներուն։

ՔՐՈՆԻԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յարութիւն սարկաւագ Կամսարական կոչուած անձին ի՛նչ տեսակ մէկն ըլլալուն վրայ Վանայ Թղթակցութեանց մէջ լիսլի տեղեկութիւնք տրուած էին արդէն, և վաւերական իրողութիւններու վրայ հաստատուած գանգատագրեր ուղղուած էին Պարիզարքարան։ Երբ, անցեալները, Ս. Հայրապետին Դիւանատունէն յանձնարարութիւն մը եկաւ Ս. Պարիզարք Հօր որ այս մարդը Վարդապետ (!) ձեռնադրելու (!!), դիտել տուինք թէ այդ կարգի մէկու մը համար Մայր Աթոռոյ կողմէ եկած յանձնարարութիւն մը ո՛րքան տարօրինակ կը թուէր մեզ, և ո՛րքան պիտի գայթակղեցնէր Վանայ և Արթամարի Թեմականները։ Պարիզարքարանը, կամ կրօնական ժողովը, չկարողացաւ գտնուիլ տալ Մայր Աթոռէն եկած յանձնարարութիւն, և չտա իրաւամբ։ Հիմա, կ'լսենք թէ Ն. Ս. Օծութեան Հայոց Հայրապետին դիւանապետ և խորհրդական Տ. Կորիւն Վրդ. գրեր է Ս. Պարիզարք Հօր թէ այս յանձնարարութիւն առթիւ իրեն և Գրն. Խոսրէն Արիմեանի համար Բէյաղզիի մէջ եղած ենթադրութիւնք անիմն են, որովհետեւ իրենք Յարութիւն սարկաւագին ո՛րպիսի անձն ըլլալը Վանայ տեղապահ Սահակ Եպս.ին հարցուցին, և անիկա առէջ մարդ է ըսաւ (?)։ Աւասիկ Կորիւն Վրդ.ին բովանդակ պատճառաբանութիւնը.—Սահակ Եպս.էն բարի վկայութիւն առուած է եղեր։—Բայց որովհետեւ ա՛յ թէ Սահակ Եպս., այլ Պարիզարքարա՛ն էր, կրօնական Ժողո՛վն էր որ յանձնագրեցաւ Յարութիւն սարկաւագին Վարդապետ ձեռնադրելու խնդիրքը, որովհետեւ Պոլիսէն մերժում կրնէր ե՛ւ քէն էր որ յիշեալը դիմած էր Էջմիածին, Հայրապետական դիւանապետը պարտական չէր մինչ նախ և առաջ հարցնել Պարիզարքարանի թէ ի՞նչ էր այս արարածին բարոյական և վարչական անցեալը, թէ ինչո՛ւ զլացուած էր Վարդապետ ձեռնադրուելու իր խնդիրքը։ Ձեռնադրման հրամանը Պարիզարքարանէն պիտի բխէր, ըստ Պարիզարքարանի Օրէնքին, ո՛չ թէ Սահակ Եպս.էն, և քանի որ Պարիզարքարանը մերժած էր այն արտօնութիւնը, Հայրապետական Դիւանատունը պէտք էր իր խնդրան լոյսը ցոյց Պարիզարքարանէն, ո՛չ թէ Վանայ տեղապահէն։— Բայց նայի՛նք իրա՞ւ է որ նոյն ինքն Սահակ Եպս. այնքան պաշտաւոր վկայութիւն մը տուած ըլլայ յիշեալ Յարութիւն Կամսարականին համար, զոր սարկաւագ ձեռնադրելուն շատոնց զղջացած է անոյշա Տ. Գրիգորիս Արք. Կրօնական Ժողովոյ Ատենապետը, քանի որ Սահակ համամիտ չէ անոր Վարդապետ ըլլալուն։ Մեր առջեւ չունինք Սահակ Եպս.ին գիրն առ Կորիւն Վրդ.։, բայց նախընթաց եօթնեկին մէջ նոյն Սահակ Եպս.էն գիր մը եկաւ Պարիզարքարան, որով կ'գանգատի Յարութիւն նարկաւագին վարմունքէն, և կ'ծանուցանէ թէ Վանայ Թեմերէն միոյն մէջ զինք հովանական պաշտօնի կոչած ըլլալով, վերջերս հարկադրուած է նաև կանչել զինք Վան, որովհետեւ ա՛յն տեղէն ալ ծանր գանգատներ եկած էին իր զանազան վարմունքներուն համար։ Այս իրերայաջորդ գանգատներն ա՛յնպիսի բնութիւն մ'ունին որ աւելի արդար պիտի ըլլար այն կէս մը կրօնաւորութիւնն ալ վրայէն առնելով թողուլ զինք իբրեւ աշխարհական իր անձնական բնազդներուն հետեւելու, քան թէ կրօնաւորութեան լուծն ա՛լ աւելի ծանրացնել իր վրայ։ Եւ տա՛ ինչ տեսակ մէկու մը վարդապետական ասիճան կ'ենդրուէր Մայր Աթոռոյ պաշտօնական կնիքովը!։ Ըսել է որ եթէ այս մարդն ուղղակի Մայր Աթոռի իրաւասութեան տակ ըլլար, ի վաղուց Վարդապետ ձեռնադրուած պիտի ըլլար, ա՛վ գիտէ ի՞նչ տեսակ ազդեցութեամբ կամ զօրութեամբ։ Կարիւ Վրդ. և Գրն. Խոսրէն Արիմեան արդէն այնքան ներողամիտ են, այնքան թոյլատու, այնքան բարեսիրտ, և այնքան դիւրին է իրենց մէջ համոզումներ գոյացնել, որ ամէն ասիս Տփղիսի Թղթակցութիւններուն մէջ կ'տեսնենք թէ ո՛ր տաճիան դիւրաբեկներ, կամիլակներ, և եկեղեցական տաճիաններու պատիներ կ'բաշխեն առնոց որ դիմաւ ընելուն և հայցելուն կերպը գիտեն, այն ալխարհական իմաստութեամբ որ ամենայն ինչ է յաջողելու համար կեանքի ասպարէզներուն մէջ։ Իրա՛ւ է որ երեք ամիսի ի վեր անպատասխանի կ'թողուի Հայոց Պատրիարքին պաշտօնական դիմումը, որով Արքեպիսկոպոսութեան պատիւը կ'խնդրեր Արեւմտեան Հայոց երեք արժանաւոր Եպիսկոպոսներուն համար, որք եթէ ոչ ուրիշ արժանիքով, եթէ ոչ ուրիշ ծառայութեամբ, գէթ ասիճանի երիցութեամբ առ այն իրաւունք ստացած են առաւել քան կարգ մը Արքեպիսկոպոսներ որք թաւքիրիս Եպիսկոպոսներէն աւելի ժամիկ կ'գանուին Մայր Աթոռին։ Կ'երեւի թէ Սահակ Եպս. մ'ալ չէ գտնուեր որ բարեխօսէր Արեւմտեան Հայոց այս երեք Եպիսկոպոսներուն համար...։ Կամ կ'երևի թէ Արքութեան ասիճանին պաշտօնագրերը դիւրաւ չեն ելներ Կարիւ Վարդապետներու և Գրն. Խոսրէն Արիմեաններու խստապահանջ ղեկավարութեան տակ գտնուող Դիւանատունէն։ Ապա թէ ոչ, ի՞նչ հետեւանք։ Ապահովապէս, Շերլօք Հոլմսի մը պէտք չկայ, առեղծուածը լուծելու համար։

Ս. Պարիզարքն երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Մեծ—Եպարքոսն Բարձր. Ֆէրիմ փաշայի հետ։

—Զմիւռնոյ Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը հրաժարած ըլլալով, նոր ընտրութիւն կատարուեր և անդամ ընտրուեր են Տեարք Կարապետ Աղնուրեան, ՅովՅովհաննէս Գ. Փափազեան, Տ.որ. Տ. Սպարթալի, Յակոբ Վարեէմէզեան և Յովհաննէս Գեղասղլեան։

—Իզմիրի Առաջնորդ Տ. Մելքիսեդեկ Արքեպս. ժամերս պիտի հրաժարի. Պ. Մանթաշէֆի իր ասունը հրաւիրած է զինք և գարնան Սրբազանին եղբարն Իզմիր երթալով՝ պիտի առնէ տառի զինքը։

—Իզմիրէ կ'գրեն մեզ Յնվ. 31 թուով.—Հեծելեանի արդիւնքէն մնացած զուտ 525 ոսկիէն Ն. Հարենց էֆ. 325 ոսկի ազգ. ազգին յանձնեց, մնացեալ 200 ոսկին համար ալ Թուրք մը տուաւ Փեար. 28ին վճարելի։ Բազ. Ժողովն որոշեց այս 325 ոսկին ազգ. արդէն մէջ պահել, և 200 ոսկի ալ Հիւանդանոցի անմիջական պէտքերուն յատկացնել։

«—Սոյգ աղբիւրէ կ'իմանանք թէ Մեսրոպեան դպրոցին մէջ 217 աշակերտ և Հռիփսիմեանին մէջ 160 աշակերտուհի կ'կրթուի, 106,000 ղրշ. ծախքով, որուն 85,000 ղրշ.ն ազգ. անուակը կ'վճարէ։ Այս 21,000 ղրշ.ի բացը գոցելու համար Ուսումնական Խորհուրդն որոշած էր Աղքատախնամի Ընկ. հետ միանալով քանի մը երեկոյթներ տալ 20 ղրշ. մուտքով, ուր ամէն մարդ կարնար գալ պարզ հագուստով առանց զարդի, առանց սեթեւեթի։ Այս երեկոյթներէն մին Յնվր. 3ին տեղի ունեցաւ, բայց արդիւնքն այնչափ գոհացուցիչ չեղաւ։

«—Կիրակի, Փեար. 2, երեկոյթ մ'ևս պիտի տրուի։ Շնորհիւ խնամակալուհւոյ ջանքերուն, որոց մէջ կ'յիշենք Տիկին Լիսա Յ. Բարզեան, Ա. Գ. Մարկոսոֆ, Ս. Գոճամանեան, Ե. Աղաբեկեան, Օր. Ի. Շահմանեան, այս երեկոյթը մեծ յաջողութիւն պիտի ունենայ։

«—Տեղւոյդ թերթի մը թղթակիցն յարդի մէջ մա՛ փնտռելու ելեր է։ Կ'ըսէ թէ Մասքաւէտ Տիրան Յ. Էքիզլէրի զըրկած 2600 ֆրանքը կա՞կ է եղեր և ո՞չ թէ նուէր։ Տեղւոյս Վարչութիւնն այս մասին որ և է պաշտօնական գիր ընդունած չըլլալուն, իբր նուէր արձանագրեց։ Նուէր կամ կասկ, ազգին համար տարբերութիւն մը չունի, բաւական է որ գայ և օրն օրին հրատարակուի, Արևելքի մէջ այս լուրը շատ դոյն երեւցաւ այսօր։»

—Կիրակի առաւօտ Հիւանդանոցի մասին մէջ, յանուն Ս. Պատարագ մատոյց Տ. Վարդան Ծ. Վ. Բրսխոսնեան, և հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հանգուցեալ Մանուկեան Սարգիս էֆ.ի հոգւոյն համար։ Հանգուցեալին զաւակները, ըստ սովորութեան, իրենց հօրն անուան տարեդարձի յիշատակին, Հիւանդանոցի ընդհանուր պաստպարելոց, և Ս. Յակոբայ Որբանոցի սաներուն թէ՛ ցորեկ և թէ՛ երեկոյեան հացկերոյթի ասին։ Այս առթիւ, Ս. Պատարագէն վերջը Կիւլպենկեանց դամբարանին վրայ, հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարեցաւ։ Ազօթքներ եղան նաև Կիւլպենկեան հանգուցեալ Սարգիս էֆ.ի համար, որուն մարմինն Հիւանդանոցի չորփափկին մէջ ամփոփուած է և անուան տարեդարձ էր երէկ։ Սարգիս Կիւլպենկեան որդիք, այս առթիւ, ընդհանուր պատապարելոց բաշխեցին շաքարեղէն եւ պասուց։

—Կարապետ էֆ. Իւթիւճեան, որուն ակարութիւնը ծանուցինք երէկ, կ'առապի իր հին հիւանդութենէն՝ դժուարամարսելի։ Վերջերս ալ սասակ պաղ առած ըլլալով՝ տաքութիւն եկած է վրան, ախորժակը կորուած և ընդհանուր կերպով ուժաթափ եղած է։ Շատոնց մ'է որ անկողնի կ'ծառայէ, և թէեւ առ այժմ իր վիճակն ալ ունի երկիւղալի, բայց իր յառաջադեմ տարիքին պատճառաւ զինք դարմանող բժիշկները՝ Տ.որ. Նաֆիլեան փաշա և որդին՝ Տ.որ. Մասիս, վախ կը յայտնեն թէ մի՛ գուցէ կնճռաւութիւն մը ծագի։

—Պոլսոյ հելլէնական Նախարդ դեսպան իշխան Մավրոքորտատոյի մահուան առթիւ, Ս. Պատրիարքը ցաւակցական գիր մը ուղղած է հանգուցեալին կնոջ։

—Պատրաստի Բ.որ. Ժողովոյ գլխաւորը նոր հեռագիր մը ուղղած է Պատրիարքարան, որով կ'խնդրէ իրենց վիճակին Պատր. Փոխանորդ կարգել Դամասկոսի առաջ. Տ. Սերովբէ Վ. Սամուէլեանը։ այս առթիւ հարկ եղած արտօնութիւնը առանալով Երուսաղէմայ Ս. Պատրիարքէն։

Տէր և Տիկին Միհրան Թալրաքճեան, Տէր և Տիկին Դանիկ Համբարձումեան, Տէր և Տիկին Տիգրան Մէրճիանեան (ի Բէօսէնէյ), Օր. Երանակ Ս. Կիւմիւշեան, Օր. Արաքսի Ֆինճանճեան, Այրի Տիկին Սրբուհի Թաշճեան և զաւակունք, Տէր և Տիկին Մարքայել Զատէեան և Կիւմիւշեան ընտանիքը ցաւ ի սրտի կ'ծանուցանեն զգառնաղէտ մահն

ԱՅՐԻ ՏԿՆ. ՓԷՓՈՒՆԷ Խ. ԿԻՒՄԻՒՇԵԱՆԻ

որ հանգաւ ի Տէր յեռ տարեկան հիւանդութեան ի խոր և անմխիթար սուգ հագակելով իր զաւակները, թոռները, քոյրերն և հարսն ազգականներն ու բարեկամները։ Յուղարկաւորութեան հանդէսը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 6 Փետրուար ի ժամ 4½ (Հ. Թ.) ի Ս. Թագաւոր Եկեղեցւոյ Դաստիարակի և անտի հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Սկիւտարի գերեզմանատունն իրենց դամբարանին մէջ ամփոփելու համար։

Դաստիարակ, 4/17 Փետր. 903

Մահադդ չընդունողներէն կ'խնդրուի նկատել զայս իբրեւ ոյն։

Ա

PHŒNIX ASSURANCE COMPANY

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՖԻՆԻՔՍ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ ԾԱՄԻՆ 1782

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՒԹ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 1,200,000

ՖԻՆԻՔՍ Ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի եւ կայծակի՝ կալուածք, լաքասիք եւ ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք եւ մինիմումներով տարագրելոց, որ ունիցի լիազօր իշխանութիւն կազդարելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասները։

Հ. ՍՈՒԱՆ և Ընկ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Գուլկարիոյ եւ Սեւ Ծովու եզերաց, Գալաթիա, Պանք Օթոմանի վարի քովը Վիթալիս Խան, գետնայարկ Թիւ 1։

ESTABLISHED 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ աւելի քան մի դար առաջ, ասկ հրդեհի ապահովութիւն մէջ որոյ բաժնեհարք Անգլիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։ Դրամագլուխն և պահեստի գումարը կը հասնին 4,000,000 անգլ. ոսկիի։

ՖԻՆԻՔՍ Ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան վէպ գլխաւոր ապացոյցն է 22,000,000 անգլ. ոսկւոյ գումարն որ ցարդ վճարած է հրդեհի դեպքերուն համար։

COMPAGNIE ROSSIA ST-PÉTERSBOURG

ՌՕՍԻԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 Մարտ 20ի Կայս. Իրատէով արտօնեալ

Ընկերութեան կեդրոնատեղին Բեռլերպուրկ

Ընկերութեան ապարանքը, Մեծ Մորսքայա 37

Դրամագլուխ ամբողջովին վճարեալ	1,666,667 ֆր.
Երաշխաւորութեան գումար	122,000,000 »
1901ի հասոյթ	54,000,000 »
1881էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է ժամ	249,400,000 »

Ընկերութիւնը չատ նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրէ հրդեհի, փոխադրութեանց վտանգներու, ամէն տեսակ արկածներու դէմ և կեանքի վրայ։ Նաեւ երկաթուղիով և չոգենաւով ճամբորդութեանց արկածներու դէմ էն։

Ընկերութեան քննիչ Արեւելից — Ա. ՀԻՒՐՄԻԶ

Գալաթիա, Բարտէն Լոյ (հին Մոփոպոն տեղը) — Ընդհ. Գործակալ Թուրքիոյ համար — ԹԻՒՍՕՐ ՌՈԲԻՆ

ԳԵՐՄԱՆԵԻԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԳԻԾ

HAMBOURG—AMERICA եւ DEUTSCHE LEVANTE LINIE

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՇՈՓԵԼԱԻԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՆԵՒ—ԵՈՐՔԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԻՑ ՄԻՋԵՒ ՀԱՍՏԱՏԱԾ ՆՈՐ ԳԻԾԸ

Ամերիկայի գիծ։— Միլոս, Փեար. 19ին Օտեսայէ գալով Նիւ Եորք կ'մեկնի։ Սիսիլիա Ցնվր. 11ին մեկնած է Նիւ Եորքէ։

Մէրիքա » 23ին » » » » և Մարտ 3ին կ'հասնի։

Նիւ—Եորքէ մեկնելով պիտի հանդիպին Մարթա, Պոլիս, Նավորսիսք և Օտեսա։ Վերադարձին Պոլիս, Մարմարայի եզերքները, Զմիւռնիա, Բիրէա, Բաթրաս, Մալթա, Ալճերիա և Նիւ—Եորք։ Նպաստաւոր պայմաններով բեռ և համբարդ կ'ընդունին հասան Միացեալ Նահանգաց համար։

Deutsche Levante Linie Ընկերութիւնը բաց ի սոյն գծէն, Արեւելից կողմը կ'զրկէ իր չոգենաւները կանոնաւոր կերպիւ, ամէն 8—10 օրն անգամ մը Համբուրկէ՝ ամէն 15 օրն անգամ մը Անվերսէ, և ամիսն անգամ մը Նիւ-Եորքէ և Բոթերտամէ, Զմիւռնիոյ, Պոլսոյ և Սեւ Ծովի համար։

Therapia, Stamboul և Pera չոգենաւք ճամբորդաց հասար ընդարձակ արտ, Ա. կարգի սեղան, ելեկտրական լոյս, բժիշկ և նուագախումբ ունին։

Համբուրկ—Անվերսէ կ'ապատուին Սեպտեմբրիս Փեար. 16/17ին Բիլոս 20ին, Բարոս 24ին, Վէլկիւնաէ 27ին։

Սեւ Ծովէ կ'ապատուին Սաքիրա, Լէրոս։

Դիմել մանրամասնութեանց համար, իրենց Գործակատարին ի Պանարա։

Ց. Ս. ՄՍՐԵԱՆ և Ընկ.

Հեռագիր, Missirian Panderma — H. S. Missirian et Cie

Այցելութիւն, 2Ր.
Օրինակ, 2Ր.
Փարթ, 2Ր.
Գնահատում, 2Ր.

Մեր Վաճառատան ատպ ատպ կը հասնին Հնդկատանի, Սէյլանի, Չինի և Ճավայի ընտրելագոյն ապարակներէ

ԹԷՅԵՐ

օրք մեծ քանակութեամբ կ'ապառին։ Այս անգամ հասած և հասնելիք լաւագոյն Թէյեր չատ գեղացուցիչ դներով կ'վաճառուին։ առներու մէջ գործածելու Թէյեր չատ խնայով զատուած են օրք գոհ կ'թողուն այցելուները։

Այցելեցեք ԱՐԵՏԻՍ ԱԼԷՄԵԱՆԻ Վաճառատունը, Թոնիզ փողոց, Թիւ 49, Կ. Պոլիս։

Գաւառներու յանձնարարութիւններ կ'ընդունուին գոհացուցիչ պայմաններով։ 56

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ԿԵՍՐՈՆԱՏԵՂԻ ԱՄՍԴԷՐՏԱՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՕՍՄ. ՇԱՀԱՆ

Դրամագլուխ և պահեստ 7,400,000 Շէնքի, կարասիի, ապրանքի Լէն. ապահովագրութեան համար դիմել

ԿՐՕՆՈՒԻԿ, ՏՐՆԼՕՐ և Ընկ.

8, Գօճաման օղլու խան, Պոլիս

ԱՐՏՕՆԱՏԵՐ ԲՈՒԶԱՆԴԻՈՆ ՕՐԱԳՐՈՑ

ՏՊԱՐԱՆ «ԲՈՒԶԱՆԴԻՈՆ» Կ. Պոլիս Նո 23, 25, Պոդէ Ալի Ճանապարհ

ՈՐՆ Է ԵՒ ՈՐՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԳՏՆԵԼ

Բան Զավալ Օղլու Էֆէնտի Բոպիէ



Պոլիս, Ֆէսխանէի մաքսատան փողոցը, 14 Թիւ վաճառատան ապրք, առանց իրաւունք մուծանելու, Զավալ Օղլուի խորխանիէ Տպէյով սիկարի Թուղթը ծախելուն համար, բաղաք արուած է ձեռնհաս դատարանին և միւս կողմէ Հանրօգուտ չինութեանց նախարարութենէն «կրկին խորիսթ» վաճառանիշը գործածելու արտօնութիւն առնուած է, կեղծերէն զգուշանալու համար պէտք է դիմել Պոլիս, Ալճա—Համամ, Ճէբիս խան, Թիւ 24 վաճառատունը, և ուշադրութիւն ընել «կրկին խորիսթ» վաճառանիշին և 24 Թիւին։ 63

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՑԻ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսայի Շահանէէ միւպայեա ծնունցած 9,000 մէՔրօ կիսիւլի ազգ իւէ մէզքիր ազգան իյալ իթարիւլէճէլ էլպիէնին ի-էրԷՔր խայ յաթիլէնին միւնագասարնա պէլլուՆրլաճաղրնան իթալա Թալիպ օլանլարը Թէէմինաթ ազէլիքի վէ եա միՔԵպէր գէՔալէՔնամէսի մուսթասրիքլէրի հէրկէս խազինէի ճէլիւէի միշարիլէյհաեա կէլմէկէրի իլան օլունար։

1 Շեւալթ 318 — 3-1

ՊԱՅՄԱՆՔ "ԲՈՒԶԱՆԴԻՈՆ,,Ի

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԵԳԻՆ	6 Մեկ.
ՎԵՑԱՄՍԵԱՑ »	3 »
ԵՌԱՄՍԵԱՑ »	1 1/2 »
ՁՈՒՐԷ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ	20 Փր.
ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺԱՆԵԳԻՆ	
Բոսոր լոքալով	12 ղրշ.
ՏԱՐԵԿԱՆ » » »	7 Մեկ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ	36 Ֆր.
» ՎԵՑԱՄ.	18 ԵՌԱՄ. 9 Ֆր.
ԱՆԴԼ. ԼԻՐԱ 119 ղրշ. — 20 Ֆ.ՆՈՒ	
94 1/2 ՂՐՇ. — ՖՐԻՄԻՌ 55 ՂՐՇ.	

Նոյն պայմանք Կ. Պոլսոյ եւ Գաւառի համար։ ՄԻՇՈ ԿԱՆԵՄԻՆ

Թղթատարութիւնը՝ մեր վրայ։

ԹԷՐԹՕՆ «ԲՈՒԶԱՆԴԻՈՆ»Ի (59)

ՀՍՏԱՎԵՒ ՅԸ ՄՈՆԳԻԼԻՆ

ԴԻԱՄԻՆ ՁՈՀԵՐԸ

ԵՐՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԳԻՐՔ

ՄԱՑՐՆ ԵՒ ՈՐԴԻՆ

Լէ

=Աղջիկը կ'ճանչնա՞ք ուրեմն, հարցուց Տոքտորն աչուժով։ Իր ընտանիքէն էք։

—Իր ընտանիքէն չէմ, բայց կ'ճանչնամ։ Իր ընտանիքին և նշանածին կողմէ է որ կ'փնտռեմ խեղճ աղջիկը։ Բօմիսէրը չկրցաւ ըսել թէ ո՛ւր տարուած էր հսկէ։ Եկած եմ խնդրելու որ հաճիք այս մասին տեղեկութիւն տալ ինձ։

=Եթէ ձեր փնտռած անձն իրօք այն աղջիկն է զոր Հոկտ. 25ի առտուն գտանք Գաս կղզիի ծայրը, տակաւին հոս է։

—Հո՞ս պտռաց Բիքօլէ ծայրայեղ ուրախութեամբ։

=Այո՛, Միւսիւ, կնոջս՝ Տիկին Օժէի՝ հետ սեղան նստած է այս միջոցիս։

Սդա—Բի ապշեցաւ մնաց։—Ձեր սեղանը, Թոթովեց։ Բայց ըսել է յիսար չէ այլ էա։

=Ա՜խ՛ղ, Միւսիւ, է տակաւին, թէև զգալի բարւոքում մը կ'երեայ իր վիճակին մէջ։ Տիկին Օժէ չատ նէր տուաւ ասնոր։ Իր անուշ և մեղամաղձոտ յիսարութիւնը չէ անոնցմէ որք կ'տարաւերծեն։ Համոզուած եմ որ իր սիրած անձերուն տեսքը պիտի բաւէ զայն բժշկելու համար։

—Եթէ այնպէս է, քանի մ'օրէն Օր. Լիւսիլ իր բանականութիւնը պիտի գտնէ։ Կառք մը ճարելու է։

=Ո՞ւր պիտի տանիք։

—Իր նշանածին, Բասդէլ Վիվանի Իշխանին որ առ յաւէտ կորսուած կ'կարծէ զայն և վշտէն կ'մեռնի այն մտածումով թէ ալ էս պիտի չտեսնէ։

=Այս աղջիկը ձեր փնտռածն է ճըշտիւ։

—Բնաւ տարակոյս չունիմ։ Եւ յետոյ, դիւրին է ապահով ըլլալ։

=Եկէք, Միւսիւ։

Բիքօլէ Տոքտորին ետեւէն գնաց։ Լիւսիլ տեղան նստած էր Տիկին Օժէի քով, որ իր աղջիկն պէս խնամք կ'տանէր անոր։ Լա Ֆօնթէդ, լուռ և հեզահամբոյր, ադու մը պէս կ'հնազանդէր Տոքտորին կնոջ, բայց առանց գիտակցութեան, մեքենական կերպով։ Ճայտարարէն ներս մտնելով և Լիւսիլը տեսնելով, Բիքօլէ ուրախութեան ճիչ մ'արձակեց։—Ան է, Միւսիւ, ըսաւ խորին յուզմամբ։ Ճիշտ ան է

Տիկին Օժէ ակնարկով կ'հարցաքննէր։ Ամուսինն երկու բառով բացատրեց։ Սդա—Բի արձակած ճիչին վրայ, Լիւսիլ գլուխը վերցուցած էր և իր անարտաւայտ ակնարկը նորեկին վրայ սեւեռած։ Բիքօլէ մօտեցաւ անոր, բռնեց ձեռքերէն մին զոր Լիւսիլ թողուց կրաւորապէս, և հարցուց Տոքտորին։—Հարցաքննեցի՞ք զինքը։

=Այո՛, քանի մը հարցումներ ըրի, էապէս անկարեւոր։ Իր անցեալ կեանքն և այս աղէտին պատճառները չգիտնալով, ըստ դիպուածի հարցումներ ըրի։

—Ո՛ւ և է անուն չմրտնաներ։

=Ոչ։

—Ուր իսկ Հէքդորի՞ անունը։

Լիւսիլի անդամները ցնցուեցան և տրտում ալքերն ոգեւորուեցան յանկարծ։ Սդամիսլայի թեւէն բռնեց, անոր աչքերուն մէջ նայեցաւ և յուզեալ ձայնով մը կրկնեց.—Հէքդոր, Հէքդոր։

—Առաջ եկած արդիւնքն սքանչելի է, պոռաց Տոքտորը։ Նայուածքը վառեցաւ, ոգեւորուեցաւ։ Կարծես թէ կ'յիշէ։ Որո՞ն անունը տուիք, Միւսիւ։

=Այն երիտասարդին, զոր կ'սիրէ և որուն հետ պիտի ամուսնանար։ Իշխան Հէքդոր որ Բասդէլ Վիվանի անունը։

—Իշխան որ Բասդէլ Վիվա՛ն, կրկնեց նորէն Լիւսիլ։ բայց այս անգամ առանցկալով։ Հէքդոր Թակարդի մէջ փնտռեցի...վիրաւորուած, մահամերձ, թեբեւս մեռած...Ան, կ'ուզեմ փրկել զինք, կ'ուզեմ...։

Լիւսիլ ընդմիջեց։ Ոտք ելած էր և թեւերն երկնցուցած։ Մարքին մէջ անհուն ակնատութիւն մը կ'կատարուէր անուշն։ Ասիկա վայրկեան մը միայն տեւեց։ Ֆօվէդ թեւը վար ձգեց, գլուխը կուրծքին վրայ ծռեց, և նստաւ նորէն։—Ա՛լ բան մը չկայ, մրմռաց Տոքտորը։ Կայծը մարեցաւ։ Բոցը չցայտեց։ Միւսիւ, աւելցուց խօսքը Բիքօլէի ուղղելով, ո՞ւր կը բնակի Մ. տը Բասդէլ Վիվան։

=Բարիզ, Ֆրանսա փողոցի իր ապարանքին մէջ։

—Իրաւունք ունիք։ Լիւսիլ ա՛լ վայրկեան մ'իսկ կենալու չէ հոս, քանի որ փրկութիւնը թերեւս այլուր կ'սպասէ իրեն։ Եւ անձամբ պիտի տանիմ զինք Իշխանին քով։

=Այդ տեսակցութենէն ինչ կ'յուսաս, բարեկամս, հարցուց Տիկին Օժէ չատ յուզուած։

—Ապաքինում կ'յուսամ, պատասխանեց Տոքտորը։

=Ա՜հ, Աստուած լսէ ձայներնիդ, պոռաց Բիքօլէ։

=Աղէկ մը հագուեցուր խեղճ աղջիկը, ըսաւ Տքդ. Օժէ։ Մուշտակագործ վերարկուին մէջ փաթթէ։ Կառքը լծել տամ, որպէս զի Բարիզ երթանք։

ԼԸ

—Հարստութիւնս չմնեցի, և այս բարի Տոքտորն ալ մինչեւն տանն չմնաց իր հարստութիւնը, կ'մտածէր Բիքօլէ առանձին մնալով, մինչ Տքդ. Օժէ հրամաններ կուտար և կինը Լիւսիլն հագուեցնելու կ'զբաղէր։ Խեղճ աղջիկը պիտի բժշկուի։ Ասոր ապահով եմ։ Կ'բաւէ որ Հէքդոր նշանածը տեսնելով, չկորսնցնէ ինքզինք։

Տան վայրկենին կառքը պատրաստ էր։ Գոց կառք մ'էր, առանց ամենափոքր վայրկենութեան բայց հանգստաւէտ։ Տիկին Օժէ Լիւսիլը տեղաւորեց կառքին մէջ, գորովագին ողջագուրեց տան անդամ, և արցունքով լվանալ զի բաժանման պահուն սիրտս յուզուեցաւ։ Երկու մարդիկը դէմը նստան և կառքը Բարիզի ճամբան բռնեց։ Ճամբաներուն ողորմելի վիճակին հակառակ, ձիերն արագ կ'քաշէին։ Իրիկուան ժամ 7½ին Շարանդոնի կամուրջն հասան։ 8¼ին, կառքը կեցաւ Ֆրանսուա Ա. փողոցը, Հէքդոր իշխանին ապարանքին առջև։ Բիքօլէ, վար ցատկելով, զանգակը զարկաւ ուժգնութեամբ։ Դռնապանը, այսպիսի աղմուկի մը վրայ ապշելով, վազեց դուռը բացաւ, մինչ երկու երեք ծառաներու հետաքրքիր գլուխներ կ'երեւային անդաստակին ապակիներուն ետեւէն։—Բայց ինչ կայ, հարցուց դռնապանը, Բիքօլէն ճանչնալով։

=Շո՛ւտ խլո՛ւտ, բացէք մեծ դուռը, որպէս զի բակը մտնէ սա կառքն որ մէկը կ'բերէ, պատասխանեց Սդա—Բի իր կարեւորութեան վրայ փքացած։

—Մէ՞կը։ Ո՞վ։

=Օր. Լիւսիլ Կոնթիէն։

Այս անունը լսելով, դռնապանն հնազանդեցաւ, մինչ Բիքօլէ դէպ ի սանդուղը խոյանալով և վերելնելով, անդամակը կ'մտնէր թաթառի մը պէս։—Իմաց տուէք Իշխանին թէ հոս եմ։ Շո՛ւտ, վայրկեան մ'իսկ մի՛ կորսնցնէք, ըսաւ սենեկապանին։ Բարի լուր մը, մեծ լուր մը կ'բերեմ։

=Իշխանն հոս չէ, Միւսիւ Բիքօլէ, պատասխանեց սենեկապանը։

—Դուրս ելաւ, պիտի գայ։

=Ո՛չ, Միւսիւ Բիքօլէ։ Օրլէան ուղեւորեցաւ Օր. Լիւսիլն ազատելու և հոս բերելու համար։ Երեք քառորդ մասամբ խենդ կ'երեար։

Մալբերդիւիի նախկին պաշտօնեան ուսերը թոթուեց։—Ադ ինչ՞ր կ'ըսէք, պատասխանեց։ Հէքդոր, եթէ խենդ չէ, ո՛չ թէ երեք քառորդ մասով, այլ ամբողջովին, չէր կրնար Օրլէան երթալ ազատելու համար Օր. Լիւսիլը զոր ես Բրէդէլի մէջ գտայ, և հոս բերի սա կառքով, ընկերակցութեամբ այն բարի Տոքտորին որ խնամից զայն և պիտի բժշկէ բոլորովին։

(Շար.) Թարգ. Ժ. ՇԻՐԱԿԱՑԻ

Ամուսինն երկու բառով բացատրեց։ Սդա—Բի արձակած ճիչին վրայ, Լիւսիլ գլուխը վերցուցած էր և իր անարտաւայտ ակնարկը նորեկին վրայ սեւեռած։ Բիքօլէ մօտեցաւ անոր, բռնեց ձեռքերէն մին զոր Լիւսիլ թողուց կրաւորապէս, և հարցուց Տոքտորին։—Հարցաքննեցի՞ք զինքը։

=Այո՛, քանի մը հարցումներ ըրի, էապէս անկարեւոր։ Իր անցեալ կեանքն և այս աղէտին պատճառները չգիտնալով, ըստ դիպուածի հարցումներ ըրի։

—Ո՛ւ և է անուն չմրտնաներ։

=Ոչ։

—Ուր իսկ Հէքդորի՞ անունը։

Լիւսիլի անդամները ցնցուեցան և տրտում ալքերն ոգեւորուեցան յանկարծ։ Սդամիսլայի թեւէն բռնեց, անոր աչքերուն մէջ նայեցաւ և յուզեալ ձայնով մը կրկնեց.—Հէքդոր, Հէքդոր։

—Առաջ եկած արդիւնքն սքանչելի է, պոռաց Տոքտորը։ Նայուածքը վառեցաւ, ոգեւորուեցաւ։ Կարծես թէ կ'յիշէ։ Որո՞ն անունը տուիք, Միւսիւ։

=Այն երիտասարդին, զոր կ'սիրէ և որուն հետ պիտի ամուսնանար։ Իշխան Հէքդոր որ Բասդէլ Վիվանի անունը։

—Իշխան որ Բասդէլ Վիվա՛ն, կրկնեց նորէն Լիւսիլ։ բայց այս անգամ առանցկալով։ Հէքդոր Թակարդի մէջ փնտռեցի...վիրաւորուած, մահամերձ, թեբեւս մեռած...Ան, կ'ուզեմ փրկել զինք, կ'ուզեմ...։

Լիւսիլ ընդմիջեց։ Ոտք ելած էր և թեւերն երկնցուցած։ Մարքին մէջ անհուն ակնատութիւն մը կ'կատարուէր անուշն։ Ասիկա վայրկեան մը միայն տեւեց։ Ֆօվէդ թեւը վար ձգեց, գլուխը կուրծքին վրայ ծռեց, և նստաւ նորէն։—Ա՛լ բան մը չկայ, մրմռաց Տոքտորը։ Կայծը մարեցաւ։ Բոցը չցայտեց։ Միւսիւ, աւելցուց խօսքը Բիքօլէի ուղղելով, ո՞ւր կը բնակի Մ. տը Բասդէլ Վիվան։

=Բարիզ, Ֆրանսա փողոցի իր ապարանքին մէջ։

—Իրաւունք ունիք։ Լիւսիլ ա՛լ վայրկեան մ'իսկ կենալու չէ հոս, քանի որ փրկութիւնը թերեւս այլուր կ'սպասէ իրեն։ Եւ անձամբ պիտի տանիմ զինք Իշխանին քով։

=Այդ տեսակցութենէն ինչ կ'յուսաս, բարեկամս, հարցուց Տիկին Օժէ չատ յուզուած.

—Ապաքինում կ'յուսամ, պատասխանեց Տոքտորը։

=Ա՜հ, Աստուած լսէ ձայներնիդ, պոռաց Բիքօլէ։

=Աղէկ մը հագուեցուր խեղճ աղջիկը, ըսաւ Տքդ. Օժէ։ Մուշտակագործ վերարկուին մէջ փաթթէ։ Կառքը լծել տամ, որպէս զի Բարիզ երթանք։

ԼԸ

—Հարստութիւնս չմնեցի, և այս բարի Տոքտորն ալ մինչեւն տանն չմնաց իր հարստութիւնը, կ'մտածէր Բիքօլէ առանձին մնալով, մինչ Տքդ. Օժէ հրամաններ կուտար և կինը Լիւսիլն հագուեցնելու կ'զբաղէր։ Խեղճ աղջիկը պիտի բժշկուի։ Ասոր ապահով եմ։ Կ'բաւէ որ Հէքդոր նշանածը տեսնելով, չկորսնցնէ ինքզինք։

Տան վայրկենին կառքը պատրաստ էր։ Գոց կառք մ'էր, առանց ամենափոքր վայրկենութեան բայց հանգստաւէտ։ Տիկին Օժէ Լիւսիլը տեղաւորեց կառքին մէջ, գորովագին ողջագուրեց տան անդամ, և արցունքով լվանալ զի բաժանման պահուն սիրտս յուզուեցաւ։ Երկու մարդիկը դէմը նստան և կառքը Բարիզի ճամբան բռնեց։ Ճամբաներուն ողորմելի վիճակին հակառակ, ձիերն արագ կ'քաշէին։ Իրիկուան ժամ 7½ին Շարանդոնի կամուրջն հասան։ 8¼ին, կառքը կեցաւ Ֆրանսուա Ա. փողոցը, Հէքդոր իշխանին ապարանքին առջև։ Բիքօլէ, վար ցատկելով, զանգակը զարկաւ ուժգնութեամբ։ Դռնապանը, այսպիսի աղմուկի մը վրայ ապշելով, վազեց դուռը բացաւ, մինչ երկու երեք ծառաներու հետաքրքիր գլուխներ կ'երեւային անդաստակին ապակիներուն ետեւէն։—Բայց ինչ կայ, հարցուց դռնապանը, Բիքօլէն ճանչնալով։

=Շո՛ւտ խլո՛ւտ, բացէք մեծ դուռը, որպէս զի կառքը մտնէ սա կառքն որ մէկը կ'բերէ, պատասխանեց Սդա—Բի իր կարեւորութեան վրայ փքացած։

—Մէ՞կը։ Ո՞վ։

=Օր. Լիւսիլ Կոնթիէն։

Այս անունը լսելով, դռնապանն հնազանդեցաւ, մինչ Բիքօլէ դէպ ի սանդուղը խոյանալով և վերելնելով, անդամակը կ'մտնէր թաթառի մը պէս։—Իմաց տուէք Իշխանին թէ հոս եմ։ Շո՛ւտ, վայրկեան մ'իսկ մի՛ կորսնցնէք, ըսաւ սենեկապանին։ Բարի լուր մը, մեծ լուր մը կ'բերեմ։

=Իշխանն հոս չէ, Միւսիւ Բիքօլէ, պատասխանեց սենեկապանը։

—Դուրս ելաւ, պիտի գայ։

=Ո՛չ, Միւսիւ Բիքօլէ։ Օրլէան ուղեւորեցաւ Օր. Լիւսիլն ազատելու և հոս բերելու համար։ Երեք քառորդ մասամբ խենդ կ'երեար։

Մալբերդիւիի նախկին պաշտօնեան ուսերը թոթուեց։—Ադ ինչ՞ր կ'ըսէք, պատասխանեց։ Հէքդոր, եթէ խենդ չէ, ո՛չ թէ երեք քառորդ մասով, այլ ամբողջովին, չէր կրնար Օրլէան երթալ ազատելու համար Օր. Լիւսիլը զոր ես Բրէդէլի մէջ գտայ, և հոս բերի սա կառքով, ընկերակցութեամբ այն բարի Տոքտորին որ խնամից զայն և պիտի բժշկէ բոլորովին։

(Շար.) Թարգ. Ժ. ՇԻՐԱԿԱՑԻ

ՄԵԾ ՄԱՔԵՐՔ

ԳՈՆԵԱՔԻ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՍԱԼ Ի 1845 ԹՒՈՒՆ

Մ. ՊԱՐՊԱՐԷՍՍՈ ԵՂԲԱՐՔ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՄԹԵՐԱՆՈՑ

ԲԻՐԷԱ

600,000 ՊԱՆ

ԳՈՐԾԱՏԵՂԻ ԳՈՆԵԱՔԻ ՄԷԳԵՆԱՆԵՐՈՒ Ի ՎԱԼԻԹՕՆ

GRANDE DISTILLERIE Barbaresso Frères

PIRÉE (GRÈCE)

ՔՕՆԵԱՔ ՊԱՐՊԱՐԷՍՍՕ Մ. ԵՂԲԱՐՑ

Պարպարէսսօ Մ. Եղբարց յունական քօնեաքը զուտ խաղողի արտադրութիւն է որուն ճարտարարուեստական հակայ գործարանն հիմնուած է 1840ին և փոխանցուած է իրենց հօրմէն։ 1875 և 1888ի յունական արուեստահանդէսը, 1889 ի Բարիզի, 1894ի Շիքակոյի ամերիկեան, 1895ի Պոռսի և 1900ի Բարիզի մեծ արուեստահանդէսները միահամուռ հաստատած են որ Պարպարէսսօ Մ. Եղբարց ժառանգաւոր պատրաստած քօնեաքը թէ՛ հին է թէ՛ ընտիր և ի հաստատութիւն՝ վարձատրած են պատուոյ մրցանակներով, նոյնը կ'հաստատեն նաեւ մեծահռչակ բժիշկներու և քիմիագէտներու վկայութիւնքը։ Պարպարէսսօ Մ. Եղբարց քօնեաքին տրուած ուրիշ բազմաթիւ վկայագիրներն աւելորդ է թուել, քանի որ հանրածանօթ է այն և սպառումը՝ առաջին ատիճանի, մրցակիցներուն նախանձը գրգռելու չափ։

Սոյն վաճառատան մէջ կ'ծախուի նաեւ, բեռ կշռելու համար բնաւ չժուրղ մնոռնիս գնոռներ, Ծունատանի ընտիր օճառ և հելլենական բերքեր, տարադրութիւններ ու ձեռարուեստներ։

Մենաշնորհեալ պաշտ.) Արծաթ Խ. Ս. Փրկչի) Հայթայթիչ որքայական տան Ն. Վեհ. Ծունատանի Թագաւորին — 50—29

Ամէն յանձնարարութեան համար դիմել, Կ. Պոլիս. — Առ. Պ. ԱԹԱՆԱՍ Ս. ԲԱԼՕՒՐԻՍԹՕ Ներկայացուցիչ Թուրքիոյ — Կալաթա

ՆԱՄԱԿԻ ԱՕՆՈՑ ԿԱՄ ՀՕՆՈՑ ԲՈՒԼ — և մ'է թէ Մենիր կամ Իլմախոզէրի բուլ— զրկել կ'ինդրուի անմոցմէ որք փոքր գումարներու համար նախասիրար կ'սեպեն տակաւին բուլ զրկել ապահովագրեալ նամակ։ Բոստանէի բուլէն զատ ուրիշ բուլեր վճառով կը ծախուին, և տարբերութիւնն առաքողը կ'տուժէ ի հարկէ։

ԱՂԲԱՏԱՒՈՒԱՄՍ ներկայիս կ'փութայ ծանուցանել թէ տրդուկի ծանօթ վարպետ Ցարութիւն էֆ. Գոթիրճեան տրդուկի և լուացքի գործատուն մը բացած է ի Բերա, Թագսիմ փողոց, Թիւ 19։ Սոյն վարպետն իր խնամքով ալեսատութեամբ, մաքրութեամբ և չափաւոր գիներով իրեն դիմողները գոհացնելու առաջադրութենէ զատ, Աղքատախնամս ամէն ամիս չանարժին մը նուիրելու ինքնայորդոր և գովելի յանձնառութիւնն ալ ունեցած է։ Աղքատախնամս հրաւէր կ'կարդայ բարեհոգ ազգայնոց, զոյն քաջալերել իր ձեռնարկին մէջ, որով միանգամայն սատարած պիտի ըլլան Աղքատախնամս նուիրական գործին։ 15—6

Ի դիմաց Աղքատախնամի

Վ. Առենադպիր — Առենապետ

Տէր Տ. Բաքանէն — Տէր Տ. Ակնունի

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՑՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER MANUFACTURING Co

Սինկէրի կարի մեքենաները զուտ անգլ. պողպատէ շինուած ըլլալով, իրենց տոկունութեամբ այնքան գնահատուած են որ աշխարհս ամէն կողմը տարածուած են, և բոլոր ընտանիքները, դերձակներն ու կօշկակարները լոկ Սինկէրի մեքենայ սկսած են գործածել։ Սինկէրի Ընկերութիւնն ցարդ 400 է աւելի պատուոյ վկայական և չքադրամ ստացած է բոլոր գուցահանդէսներու մէջ։

Մասնաճիւղեր բովանդակ Թուրքիոյ մէջ։

Սինկէրի մեքենաները կ'վաճառուին՝

Բերա, Նիւսակ Ճամբայ, Ղալաթա Սէրայի դիմաց։

Բերա) Նիւսակ Ճամբայ Պօն—Մարշէի դիմաց Թիւ 343 և 343 կրկին.

Ղալաթա) Սինկէր Խան, Թիւնէլին եանա.) Թրամվայի կայարանին դիմաց.

Սամսոյ) Սուլթան Համամ Թիւ 2.) Սուլթան Պայազիտ Թրամվէյի Սթամբոլին դիմաց Թիւ 13.

Սկիւտար, Ջարշի Պոյու, Թիւ 120.

Կեղծերէն զգուշանալու համար վերի նշանին ուշադրութիւն ընելու է

Ընկերութեան կեդրոնական վարչատեղին կ'գտնուի Բերա, Նիւսակ Ճամբայ, Թիւ 343 և 343 կրկին, Տիւզ Օղլու Սարգիս Պէյի տունը։

ԳՈՒՄ ԳԱԼՈՒԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

20ական՝ Սարգիս և Եղբարք Քէչկէկեան, Խաչիկ Փիրոսեան, Թադէոս Պէկեան, Ցարութիւն Սիմոնեան, Մկրտիչ Մելիքեան, Գրիգոր Մէհէրեան, Արտաշէս Պէշիրեան, Տիկին Գասարճեան. Նշան Գարեան, Կարապետ Առապաճեան, Լէոն Կիւմիւշեան, Մարուքէ Ֆրէնկեան, Յակոբ Արապեան, Մեսրոպ Պէլլիքճեան, Միհրան Գարագաշեան, Պողոս Աչպէյանեան, Տէր և Տիկին Գէորգ Ալիքանեան, Մարտիրոս Թէլեան, Տիկին Մագուլեան, Աւետիս Կիւլպէնկեան, Սարգիս Թէլիքեան, Ռմն, Պաղտասար Տէյիրմէնճեան, Գրիգոր Գայսերլեան, Սինէքերիմ Պաղտասարեան, Յակոբ Տէօքմէճեան, Ստեփան Ճամճեան, Կարապետ Փափազեան, Եղիազար Ժամկոչեան, Տքդ. Վարդանեան, Պետրոս Քէրստէճեան, Գալէնտէրեան եղբարք, Միհրան Թէրզեան, Հայկազուն Կ. Կիւլպէնկեան, Կարապետ Թօպաքեան, Նիքոս Պարոնեան, Կարապետ Այճեան, Սերովբէ Թագորեան, Կարապետ Սօլախեան, Տքդ. Ամիլեան, Մաքսուտ Ծոնիկ, Յակոբ Խոսրիկեան, Տէն. Եւփիմէ Տէր Անդրէասեան, Գրիգոր Վարժապետեան. Սերովբէ Եավրուլեան, Հաճի Միրիկ Գրիգորեան, Ցովհ. Թէլլալեան, Օնիկ Սարգեան, Կարապետ Խանճեան, Արշակ Բէրէեան, Գէորգ Էչօքմակէօզեան, Տրմիզրաքի գի Նեպան, Գրիգոր Բէյնեսեան, Ադամ Վարդանեան,